

ԱՐՇԱՄ ԽՈՆԴԱՐԵԱՆ

ՕՊՈԶԻՑԻԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԼԱՍՏԱՆՈՒՄ

II

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ

Ռուսական յեղափոխութիւնը չկարողացաւ մինչեւ վերջն էլ լուծել իշխանութեան հարցը, եւ այդ եղաւ նրա կործանման պատճառներից մէկը: Յարական իշխանութեան տապալման հէնց առաջին օրից Պետերբուրգում ստեղծւեց երկիշխանութիւն՝ ժամանակաւոր կառավարութիւնը և խորհուրդները: Նոյնը եղաւ նաեւ Անդրկովկասում, որտեղ Օզակովի (Ժամ. Կառավարութիւնը ներկայացնող մարմին) և տեղական յեղափոխական կազմակերպութիւնների (խորհուրդների) վրա, 1917թ. վերջերին, աւելացան նաեւ Հայոց, Վրաց եւ մահմետականների Ազգային խորհուրդները: Դրանցից առանձնապէս շեշտած գործունէութիւն հանդէս բերեց Հայոց Ազգային խորհուրդը և այդ պատճառով էլ ամենից շատ նա ուշադրութիւն գրաւեց իր վրա: Ինչպէս տեսանք այս յօդաձաշարի առաջին գլխում, յեղափոխական կազմակերպութիւնները Անդրկովկասում հէնց սկզբից ձգտեցին եւ մասամբ էլ յաջողեցան իրենց ձեռքն առնել տեղական ամբողջ իշխանութիւնը, չեղոքացնելով մրցակից միւս մարմինները: Այս ձգտումը պատճառ եղաւ, որ այդ կազմակերպութիւնները խորթ աչքով նայեան Ազգային խորհուրդների գոյութեան ու գործունէութեան: Սակայն, այն էլ պէտք է ասել, որ բացասական այդ վերաբերմունքը երբեք ծայրայեղութեան չհասաւ, եւ սոցիալիստական կուսակցութիւնները (սոց.-յեղ. եւ սոց.-դեմ.) չարգելեցին իրենց անդամներին մասնակցելու համապատասխան Ազգ. խորհուրդներին: Եւ մենք ու մեզ հետ միասին նաեւ հայ սոց.-դեմոկրատները տւինք մեր ներկայացուցիչները թէ՛ սեպտեմբերի վերջերին (1917թ.) Թիֆլիսում գումարաւճ Ռուսահայերի Համագումարին եւ թէ՛ այս վերջինիս կողմից ընտրւած Ազգ. խորհուրդին: Այսուհանդերձ, պէտք է աւելացնել նաեւ այն, որ Ազգ. խորհուրդների իրաւասութիւնների

նկատմամբ, մենք այդ շրջանում միշտ այն տեսակէտը պաշտպանեցինք, որ նրանք պէտք է լինեն միայն օժանդակիչ մարմիններ եւ ոչ թէ մրցակիցներ յեղափոխական կազմակերպութիւններին: Սէյմի շրջանում, երբ նսեմացաւ խորհուրդների դերը եւ Անդրկովկասի իշխանութիւնը այս վերջինների ձեռքից անցաւ ադգութիւնների ներկայացուցիչներից բաղկացած Կոմիսարիատին ու կառավարութեան, մեր բացասական վերաբերմունքը դէպի Ազգ. Խորհուրդները է՛լ աւելի մեղմացաւ: Երբ որ իրերի դժբախտ դասաւորութեամբ դրութիւնն այնպէս էր փոխւել, որ պէտք էր ընտրութիւն անել Սէյմի կամ Ազգ. Խորհուրդների միջեւ, մենք որեւէ պատճառ չունէինք դերադասութիւնը տալու առաջինին:

Բնորոշ է, որ նոյն այս շրջանում նաեւ Դաշնակցութեան մէջ երեւան եկան բաւական շեշտած տարակարծութիւններ այն մասին, թէ ինչպէս պէտք է բաշխել իրաւասութիւնները (փաստօրէն) Անդրկովկասեան կառավարութեան եւ Ազգ. Խորհուրդի միջեւ: Որոշապէս ուրազօճեցան երկու խմբակներ, երկու տարբեր տեսակէտներով: Դրանցից մէկը, որ պայմանական ձեւով ես անւանում եմ «Ազգային Խորհրդի խմբակ», այն կարծիքին էր, թէ պէտք է ուժեղացնել Ազգ. Խորհուրդը, դարձնել այն հայ ժողովրդի փաստական կառավարութիւնը եւ «ձեռքի տակից», առանց հաշի առնելու Կոմիսարիատն ու Սէյմի իշխանութիւնը, ղեկավարել հայ ժողովրդի քաղաքական կեանքը իր բոլոր մարզերի մէջ: Միւսը՝ «Սէյմի խմբակը», դէմ չլինելով Ազգ. Խորհուրդի գործունէութեան ուժեղացման, միաժամանակ այն կարծիքն էր պաշտպանում, որ պէտք է պահել որոշ կոնտակտ վրացիների ու ադրբէջանցիների հետ եւ շարունակել պահպանել Սէյմն ու անդրկովկասեան միացեալ կառավարութեան գոյութիւնը՝ խուսափելով հակամարտութեան մէջ մտնել նրանց հետ: Այս տարակարծութիւնները վերջացան վէճի առարկայ եղող հարցի մի շատ իւրայատուկ լուծումով: Երբ արդէն նշմարւում էր երկրորդ տեսակէտի յաղթանակը, և Դաշնակցութիւնը օրէցօր աւելի ու աւելի էր մխրճւում համաանդրկովկասեան (Սէյմ) գործունէութեան մէջ, տեղի ունեցաւ վրացիների մայիս 26ի յայտնի բռն դժտան, որի հետեւանքով Հայոց Ազգ. Խորհուրդն էլ դարձաւ «հայկական գաւառների գերագոյն և միակ իշխանութիւնը» և «ստանձնեց կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գաւառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»:

Այսպիսով, իրերի բերումով, հայ քաղաքական կեանքը, իր սկզբնաւորութեան հէնց առաջին օրերից, խուսափեց այն երկիշխանութիւնից, որ փետրւարեան յեղափոխութեան հետ միասին առաջ

եկաւ թէ՛ Պետերբուրգում եւ թէ Թիֆլիսում: Հայոց Ազգ. Խորհուրդը, որպէս գերագոյն իշխանութիւնը կրող մարմին, եղաւ միակը եւ չունեցաւ որեւէ մրցակից՝ խորհուրդների եւ կամ յեղափոխական այլ կազմակերպութիւնների անան տակ: Անսամանօրէն լայն եղան (իրաւօրէն, անշուշտ, եւ ոչ փաստօրէն) նրա իրաւունքները նաեւ այն պատճառով, որ Ազգ. Խորհրդի ձեռքում կենտրոնացան ոչ միայն վարչական, այլ նաեւ օրէնսդրական «Փունկցիաները»: Ինչ վերաբերում է նրա կազմին, ապա յայտնի է, որ նա չեղաւ միատարր, քանի որ նրա մէջ իրենց մասնակցութիւնը բերին հայկական բոլոր կուսակցութիւնները, բացի համայնավարներից: 1918թ. մայիսի վերջին, երբ Անդրկովկասը մասնատուեց երեք ազգային միաւորների, Արամեանցի տունը դարձաւ հայկական բոլոր կուսակցութիւնների միակ կենտրոնավայրը: Այնտեղ տեղափոխուեցին ոչ միայն ազգային կազմակերպական ձեւ ունեցող Դաշնակցութեան, այլ նաեւ միջազգային կազմակերպական ձեւ որդեգրած երկու սոցիալիստական կուսակցութիւնները (սոց. - յեղ. եւ սոց. - դեմ.) հայ անդամների մեծ մասը:

Ի՞նչպէս վերադասաւորուեցին Ազգ. Խորհրդում հայ քաղաքական կազմակերպութիւնների ուժերը եւ ի՞նչ փոխարարբերութիւններ ստեղծուեցին նրանց մէջ: Վերը ասուց, որ Ազգ. Խորհուրդը կազմեց քաղաքական սկզբունքի հիման վրա, ինչ որ նշանակում է, թէ այս դէպքում որեւէ օպոզիցիայի կամ կառավարական կուսակցութեան մասին խօսք լինել չէ կարող: Ընդդիմադիր գործունէութիւն, բուն իմաստով, մեմֆ ունեցաւ միայն Հայաստանում, երկու ամիս յետոյ, երբ Խորհրդարանի բացումով, մեր երկրում հաստատուեցան պարլամենտական կարգեր: Հայոց Ազգային Խորհուրդը, Թիֆլիսեան իր գործունէութեան ամբողջ ընթացքում, ներկայացնում էր ազգային միացեալ նախադրանք, որի մէջ պատասխանատու դեր ունէին մեր բոլոր կուսակցութիւնները: Շնորհիւ մի շարք առարկայական պայմանների այդ կուսակցութիւնների համագործակցութիւնը յիշեալ շրջանում ընթանում էր միանգամայն բնականօրէն պայմաններում: Կային, անշուշտ, տարակարծութիւններ այս կամ այն ընթացիկ հարցի շուրջը, բայց հիմնական խնդիրները այնպիսի մի կերպարանք էին ստացել, որ մէկից ասելի լուծում դժւար էր գտնել նրանց համար: Նախկին դէպքերը, որոնք զարգացել էին անդրկովկասեան միացեալ կառավարութիւնների ժամանակ, թաթարա-վրացական գերակայ ուժերի հակադրութեան տակ, այնպիսի մի ընթացքի մէջ էին դրել այդ խնդիրները, որ կանխորոշածից որեւէ տարբեր մի ուղղութեամբ նրանց թեքել այլեւս կարելի չէր: Նման պարագաներում ոչ միայն

տեղ չէր մնում կուսակցական պայքարների համար, այլ եւ շատ յաճախ աւելորդ էին դառնում խնդիրների երկար ու բարակ քննութիւնը: Յիշում եմ մի փոքրիկ դէպք, վերին աստիճանի յատկանշական Ազգ. Խորհրդում ստեղծւած այդ ժամանակէլ մթնոլորտի համար: Անհաշտներից ամենամահաշտը, հայ սոց. դեմոկրատների պարագլուխ Ա. Երզնկեանը (այսօր կոմունիստական կուսակցութեան եւ Ժող. կոմխորհի անդամ), ամենաճշնաթամային վայրկեաններից մէկում, գալով Ազգ. Խորհրդի հերթական նիստին, դիմեց ներկայ եղող անդամներին հետեւեալ խօսքերով. «Եղբայր, ասպիսի դրութեան մէջ, էլ Ժողովս ո՞րն է: Եկէք Խ. Կարճիկեանին ընտրենք ղեկատար եւ թող նա ինչպէս ուզում է, այնպէս էլ կարգադրի բոլոր հարցերը»: Այս մտայնութիւնը, աւելի կամ պակաս չափով, դերիշխում էր նաեւ միւս հոսանքների ներկայացուցիչների մօտ:

Ո՞րոնք էին, սակայն, այն խնդիրները, որ մեր պատմութեան այդ ծանր վայրկեանին դրեցան Ազգ. Խորհրդի առջեւ:

Դրանցից գլխաւորներն էին ներքին ճակատում՝ հայ քաղաքական կեանքի կազմակերպումը եւ արտաքին ճակատում՝ պատերազմի հաշիւյարդարը:

Ի՞նչպէս էին մօտենում այդ հարցերին քաղխիտունի մէջ մտած կուսակցութիւնները, եւ ի՞նչ լուծում տւեց նրանց Ազգ. Խորհուրդը:

Ինչպէս որ մատնանշեց վերը, 1918թ. մայիսի վերջերին հայ քաղաքական կեանքում ստեղծւել էին այնպիսի պայմաններ, որ նոյն իսկ ամենակարեւոր խնդիրների լուծումը որեէ մէկ չէր վերցնում: Եւ հակառակ տարածւած կարծիքի, ես պէտք է այստեղ վկայեմ, որ Հայոց Ազգային Խորհրդի մայիս 30ին յայտարարած ակտն էլ ընդունեց նոյն այդ Խորհրդի կողմից առանց ներքին պայքարների: Կային, անշուշտ, աննշան տարակարծութիւններ մանրամասնութիւնների շուրջը, բայց ուշագրաւ է, որ այդ տարբեր կարծիքները բաժանւում էին ոչ թէ ըստ կուսակցութիւնների, այլ համաձայն նոր խմբաւորումների, որոնցից իւրաքանչիւրի մէջ մտնում էին զանազան կուսակցութիւնների անդամներ: Եթէ «Թերի» եւ «դէմի» խօսք կարելի է անել, ապա պէտք է ասել, որ մասնաւորապէս Ազգ. Խորհրդի դաշնակցական անդամները բաժանւած էին թէ՛ մէկ եւ թէ՛ միւս խմբակցութեան մէջ*): Իսկ ինչ վերաբերում է բուն խնդրին, այսինքն այն հարցին, թէ Ազգ. Խորհուրդը պէ՞տք է «ստանձնէ կառավարական Փոնկիցիաներ» հայկական դաւառների նկատմամբ, ապա շատ մեծ իմաստութիւն չէր պահանջում հասկանալու համար, որ

*) Տես Ս. Վրացեանի «Հայաստանի Հանրապետութիւն» էջ 130:

այդպիսի հարց դնելն անգամ անտեղի էր այն ժամանակ, քանի որ նա արդեն լուծել էր վրացիների ընդունած ու դործադրած որոշումով՝ դուրս գալ անդրկովկասեան միացեալ հանրապետութեան կազմից ու հիմնել անկախ պետութիւն: Եւ իրօք՝ ի՞նչ էր մնում անել դրանից յետոյ Հայոց Ազգային Խորհրդին: Շարունակե՞լ ադրբէջանցիների հետ պահպանել անդրկովկասեան միացեալ կառավարութիւնը: Այդ անհնար էր, թէկուզ հէնց այն պատճառով, որ թաթարները չէին ուզում: Յայտարարե՞լ, որ հայկական դաւառները վերականգնում են իրենց կապը Ռուսաստանի հետ և ճանաչում են այնտեղ դոյութիւն ունեցող իշխանութիւնը: Բայց այդ նշանակում էր, որ եւէ իրական կապ չվերահաստատելով Ռուսաստանի հետ, զրկել այդ դաւառները պետական իշխանութիւնից և դարձնել նրանց այսպիսով «անտէր իր» ու իրաւունք տալ ամէն մէկին դրաւել այդ հողերը, ով որ չէր ծուլանայ այդ անել: Այլ լուծում չկար եւ մնում էր, ուրեմն, այն ծանօթ ելքը, որին եւ ապաւինեց Ազգ. Խորհուրդը:

Այսօր, երբ կուսակցական պայքարի եւ կուսակցական պրոպագանդի շահերից մեկնելով, մարդիկ պէտք են տեսել «առասպելացիներ» մեր մօտիկ անցեալի պատմութիւնը, մեր կեանքում չըջան է անում այն զրոյցը, որ իբր թէ 1918թ. մայիս 28—30ին (ըստ Ա. Խատիսեանի 28ին, իսկ ըստ Ս. Վրացեանի՝ 30ին) Ազգ. Խորհուրդը հռչակել է Հայաստանի անկախութիւնը եւ որ դրան դէմ են եղել որոշ մարդիկ ու խմբակցութիւններ և մասնաւորապէս հայ ս.-յեղափոխականները*): Այս յայտարարութեան առաջին մասը, իր վերոյիշեալ ձեւակերպումով, ինչպէս կը տեսնենք յետոյ, չէ համապատասխանում իրականութեան, իսկ ինչ վերաբերում է նրա երկրորդ մասին, ապա այդտեղ նոյնպէս կայ մի խոչոր թիւրիմացութիւն, որ անհրաժեշտ եմ հարում պարզել:

Անդրկովկասեան անկախութիւններ չկատմամբ սոցիալիստ-յեղափոխականները վայելել են հետեւողական հակառակորդների համբաւ: Սակայն, ինչպէս որ տարբեր են եղել անկախութեանց այդ ակտերի (թւով չորս՝ Անդրկովկասի եւ ապա Վրաստանի, Ադրբէջանի ու Հայաստանի) յայտարարման պայմաններն ու նրանց նշանակութիւնը, այնպէս էլ տարբեր է եղել դրանցից իւրաքանչիւրի հանդէպ մեր ցոյ աւած բացասական վերաբերմունքի տարողութիւնն

*) Ա. Խատիսեանը գրում է իբր «Հայաստանի Հանրապետութեան Ծագումն ու Զարգացումը» գրքի մէջ (էջ 68), որ անկախութիւն յայտարարելու կողմնակից են եղել Ազգ. Խորհրդի մէջ մասնակցող բոլոր կուսակցութիւնները:



Բժ. Յ. ԶԱԻՐԵԱՆ

ու սրահը: Ամենից շատ եւ ամենից ուժգին մեր ընդդիմադրութիւնն ու հակառակութիւնը եղել է հանդէպ ապրիլ 9(22)ի ակտի (Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից եւ անկախ հանրապետութիւն յայտարարելը), իսկ բոլորից քիչ՝ Հայոց Ազգ. Խորհրդի մայիս 30ով թւարկած եւ 31ին հրատարակած Յայտարարութեան դէմ: Եւ այդ հետեւեալ պատճառներով:

Անդրկովկասը անկախ յայտարարելուն մենք դէմ էինք ոչ թէ մեկնելով ոռւս պետականութեան շահերից, ինչպէս փորձում էին տարածել բանավէճերի ժամանակ մեր հակառակորդները, այլ ի նկատի ունենալով անդրկովկասեան ժողովուրդների բարօրութիւնն ու ապահովութիւնը: Ընդունելով հանդերձ, որ բուլշևիկեան յեղաշրջման ու զօրաճակատի քայքայման հետեւանքով Անդրկովկասի համար ստեղծւել է վերին աստիճանի ծանր կացութիւն, մենք միեւնոյն ժամանակ այն խորը համոզմունքն ունէինք, որ վրաց սոցիալ դեմոկրատների առաջարկած միջոցը՝ յայտարարել Անդրկովկասը անկախ հանրապետութիւն որեւէ կերպով չէ կարող հանել երկիրը այդ ծանր դրութիւնից: Աւելին՝ մենք գիտէինք, — եւ մեզ հետ միասին շատ շատերը, — որ այդ անկախութիւնը է՛լ աւելի մեծացնելու է դժարութիւնները թէ՛ արտաքին եւ թէ՛ ներքին ճակատներում: Մասնաւորապէս հայ էս-էսներս, որպէս աւելի ծանօթ Անդրկովկասի պայմաններին, զգում ու տեսնում էինք, որ մեր ժողովուրդին սպառնացող վտանգը Սէյմի որոշումով է՛լ աւելի անմիջական ու մօտահաս էր դառնում եւ այդ պատճառով էլ մենք այս խնդրում աւելի անհաշտ զիրք էինք բռնել, քան մեր ոռւս ընկերները:

Մեր կուսակցութեան համար դադանիք չէր եւ այն, որ Անդրկովկասի անկախութեան հարցը լուծւել էր Սէյմում նստած կուսակցութիւնների վերին խաւերի կողմից եւ որ նրանց շարքային անդամներն ու մանաւանդ անկուսակցական լայն զանգւածները դէմ էին այդ ակտին: Մասնաւորապէս մենք գիտէինք, որ վրաց սոցիալ-դեմոկրատների վարիչ մարմինը՝ նրանց Շրջանային Կոմիտէն անկախութեան որոշումը ընդունել էր երկարատեւ վիճաբանութիւններից յետոյ եւ ձայների չնչին մեծամասնութեամբ: Ինչ վերաբերում է Դաշնակցութեան, բոլորի համար պարզ էր, որ նա դործում էր այս խնդրում «ոչ թէ խղճի մտօք, այլ հարկադրաբար»: Այս ամենը նսեմացնում էր ապրիլ 9(22)ի ակտի նշանակութիւնը, զցում էր նրա վարկն ու հեղինակութիւնը զանգւածների աչքին ու թեւաւորում անկախութեան հակառակորդներին իրենց պայքարի մէջ:

Մեր կուսակցութեան պաշտօնաթերթ «Անախա Տրուդա»ն, իր ապրիլ 13ի խմբագրականի մէջ, անդրադառնալով Սէյմի ապրիլ 9ի

նիստին, դրում էր, որ այնտեղ տեղի ունեցած քաղաքական իրադրությունները եւ ստացած մեծամասնությունը պէտք է բացատրել մի շարք պատահական հանգամանքներով, որ ոչ միայն ժողովրդական լայն զանգվածները, այլ նաեւ շատերը այն կուսակցությունաց անդամներից, որոնք քաղաքական յօդուտ Անդրկովկասի անկախութեան, դէմ են ընդունւած որոշման: Եւ արձանագրելով այս փաստը, մեր պաշտօնաթերթը այն միտքն է յայտնում, որ սոց. - յեղ. կուսակցութեան վրա պարտականություն է ընկնում «համախմբել նրանց ուլիեր դէմ էին ապրիլ 9(22)ի ակտին, առաջնորդել շարժումը ու մտցնել նրա մէջ գաղափարական որոշ հոսանք», աւելացնելով միաժամանակ, որ «կուսակցական յարաբերութիւնները արգելիչ չափով հանդիսանան այդ միացումն»: Այս մի քիչ քողարկած խօսքերի իմաստը պարզ է՝ մեր կուսակցությունը գործօն պայքարի հրաւեր էր կարողում Անդրկովկասի անկախութեան դէմ, ուղղելով իր կոչը ոչ միայն էսէռներին, այլ նաեւ այն բազմաթիւ դաշնակցականներին ու սոց. - դեմոկրատներին, որոնք այս խնդրում բաժանում էին մեր տեսակէտները:

Այժմ, երբ առիթ է ներկայացել, ես պէտք է յայտնեմ, որ վերոյիշեալ խմբագրականը այն սովորական յօդածներէց էր, որոնք կոչւած են յառուր պատշաճի տրամադրութիւններ յարուցանել ընթերցողների մէջ, այլ արդիւնք էր մի շատ կոնկրետ ծրագրի, որ մեր Շրջանային Կոմիտէի օրակարգի մէջ էր մտել այդ օրերին: Հաշի առնելով Սէյմի որոշման առաջ բերած դժգոհութիւնները լայն զանգվածների մէջ՝ մեր ղեկավար մարմնի մի քանի անդամները եւ մանաւանդ Ռուսաստանից Թիֆլիս եկած մի երկու պատասխանատու ընկերներ (Պետերբուրգի քաղաքագլուխ Գր. Շրէյդեր, Հիւսիսային Կովկասի յայտնի գործիչ Մամուլեան եւ այլն) առաջարկում էին դուրս դալ Սէյմի կառավարութեան դէմ, տապալել այն եւ իշխանութիւնը փոխանցել այն տարրերի ձեռքը, որոնք դէմ էին Անդրկովկասի անկախութեան: Այս ծրագիրը գործի չվերածւեցաւ, եւ այդ վիճաբանութիւնը այն պատճառով, որ մեր ընկերները չյաջողեցան տեւալ կարճ ժամանակամիջոցում մասնակցութեան բերել այս գործին միւս կուսակցությունների մէջ գտնուող դժգոհ տարրերը, կազմել դրանցից մի ղեկավար մարմին, զօրակոչի ենթարկել տրամադրելի ուժերը եւ ապա միայն «իջնել կռիւ դաշտ»: Դեռ չվերջացրած այդ անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները, մեր երկուստարդ ընկերները Բուսաբանական Այգու բարձունքները հանեցին կուսակցութեան ազդեցութեան տակ գտնուող մէկ մարտկոցը եւ, ոտնահարելով ամէն մի զգուշութիւն, ուղղեցին թնդանօթների բերանը դէպի փոխարքայի նախկին պալատը, որտեղ հաստատուել էր

Սէյմի կառավարութիւնը: Ռազմական այդ շարժումները յայտնաբերւեցին ներքին գործոց նախարար Րամիշվիլու գործակալների կողմից, որից յետոյ թաղւեց իր սաղմի մէջ նաեւ վերոյիշեալ ծրագիրը:

Բայց խնդիրը այս անյաջողութեան մէջ չէ: Ես կանդ առայ այս «միջադէպի» վրա միայն այն պատճառով, որ նա՝ հէնց իր գոյութեան փաստով, ցոյց է տալիս, որ ապրիլ 9(22)ի Սէյմի առաջարկած ելքը միակը չէր, որ կար այդ վայրկեանին Թիֆլիզում քաղաքականաբէս կազմակերպւած մարդկանց մի նշանակալից թիւ եւ նոյն իսկ մէկ ամբողջ կուսակցութիւն, որ հակադրում էր Սէյմի ընդունած որոշմանը մի ուրիշը, որի հանդէպ նրանք այնքան հաւատաւոր էին, որ պատրաստ էին նոյն իսկ յեղափոխական միջոցների դիմել նրա կենսագործումը ապահովելու համար:

Ահա այս կարեւոր փաստն էր, որ չկրկնեց 1918թ. մայիս 26ին, երբ Անդրկովկասի Սէյմը կատարեց իր երկրորդ պատասխանատու քայլը՝ լուծւած յայտարարեց ինքն իրեն եւ ճանապարհ հարթեց սոց.-դեմոկրատների համար՝ հռչակելու վրաստանի անկախութիւնը: Ինչո՞ւ չկրկնեց: Ինչո՞ւ մայիս 26ին, երբ պարզեց, որ ապրիլ 9(22)ի տկալ վրա դրւած յոյսերը չարգարացան, ընդդիմադիրները հանդէս չեկան իրենց հին առաջարկով՝ վերականգնել անկախութիւնից առաջ եղած գոյավիճակը ու այս անգամ էլ փորձել այն ելքը, որ իրենք էին առաջարկում: Այդ նրանք չարին այն պարզ պատճառով, որ արդէն ուշ էր: Թէեւ ընդամենը մէկ ամիս էր անցել ապրիլ 22ից մինչեւ մայիս 26ը*), բայց այդ միջոցին այնքան խոշոր դէպքեր էին կատարւել, որ այլեւս որեւէ հնարաւորութիւն չկար մէկ ամսով դառնալ դէպի յետ ու ամէն ինչ սկսել նորից: Անդրկովկասի անկախութիւնը մեծ փոփոխութիւններ էր մտցրել երկրի վիճակի մէջ թէ արտաքին եւ թէ ներքին ճակատներում, որի հետեւանքով ոչ միայն մեր ապրիլ 9(22)ի առաջարկած դեղատոմսը կորցրել էր իր փրկարար յատկութիւնը, այլ եւ միանգամայն անհնարին էին դարձել մեր ընդդիմադիր գործելակերպի մէջ պայքարի այն յեղափոխական միջոցները, որոնց մասին յիշատակեցինք վերը:

Որո՞նք էին կատարւած այդ փոփոխութիւնները:

Անդրկովկասի անկախութիւնը հռչակելու նախօրեակին հայերը եւ վրացիները կանգնած էին ներքին ճակատում անխառնութեան, իսկ արտաքին ճակատում թրքական վտանգի առաջ: Այսպիսով, երկու ժողովուրդներին սպառնացող վտանգները միատեսակ էին:

*) Մայիս մէկից Անդրկովկասը սկսեց գործադրել նոր տոմար:

Տարբերութիւնը աստիճանի մէջ էր, բայց ոչ տեսակի: Երբ ապրիլ 9(22)ին առաջ քաշեց Անդրկովկասի անկախութեան ծրագիրը, որպէս միջոց յիշեալ վտանգները չեզոքացնելու համար (Անդրկովկասի անկախութիւնը, ըստ վրացիների, պիտի դիւրացնէր Թուրքիայի հետ կնքելիք հաշտութիւնը եւ նպաստէր երեք ազգութիւններին միացնելու սեփական հայրենիքի օրինատասիոնի շուրջը, ու այսպիսով վերահաստատէր ներքին խաղաղութիւնը) թէ հայերի եւ թէ վրացիների մէջ եղան տարակուսանքներ ու տարակարծութիւններ այս խնդրի շուրջը: Վէճը գլխաւորապէս այն մասին էր, թէ իրօ՞ք առաջարկած միջոցը կարող է տալ ցանկացած արդիւնքը: Անյաջողութեան դէպքում վտանգը հայերի համար աւելի մեծ էր, եւ այդ պատճառով էլ նրանց մէջ մեծ էր նաեւ տատանողների թիւը: Վրացիները աւելի պակաս էին տուժելու եւ դրանով էր բացատրուում նաեւ այն հանգամանքը, որ նրանք աւելի հեշտութեամբ ձեռնարկեցին այդ լիորձին: Միայն թաթարներն էին, որոնք անյիճելի չահ էին սպասում Անդրկովկասի անկախութիւնից (Ռուսաստանից անջատելը ճանապարհ էր հարթում Թիւրքիայի առջեւ) եւ այդ պատճառով էլ միակամ էին այդ խնդրում:

Այլ էր իրերի դրութիւնը մայիս 26ին: Ժորդանիայի սարքած կոմբինացիան գերմանացիների հետ եւ Վրաստանի անկախութեան ծրագիրը ստեղծում էր վրաց ժողովրդի համար մի նոր կացութիւն, որը աւելի գերադասելի էր, քան երէկւայ վիճակը: Այս մասին որեւէ վէճ կամ տարակոյս գոյութիւն չունէր վրացիների մէջ՝ ոչ ղեկավար շրջաններում եւ ոչ էլ կուսակցական զանգեաճների մէջ: Եւ որովհետեւ այն ժամանակւայ պայմաններում ծրագրի յաջող իրագործումն ու նրա ընձեռած առաւելութիւնները պահանջում էին, որ վրացիները իրենց քայլը անեն մենակ, այդ պատճառով էլ մայիս 26ին նրանք բաժանեցին Անդրկովկասից եւ առանձնացան իրենց սահմաններում: Ահաւասիկ մէկը այն տարբերութիւններից, որ կար ապրիլ 9(22)ի եւ մայիս 26ի ակտերի մէջ:

Ի՞նչ էր մեր կուսակցութեան անդամների՝ հայ թէ ուս, վերաբերմունքը դէպի այս նոր անկախութիւնը: Բացասական: Մեր քննադատութիւնները ծանրանում էին գլխաւորապէս այս ակտի բարոյական կողմի վրա: Մենք ձաղկում էինք վրաց սոց.-դեմոկրատներին իրենց այն տմարդի վարմունքի համար, որ դրաւելով գերակշիռ դիրքեր Անդրկովկասի իշխանութեան մէջ, վարելով նրա ճակատագիրը համարեալ թէ միահեծանօրէն ու հասցնելով այս երկիրը կործանման դուռը՝ նրանք իրաւունք համարեցին լքել իրենց գործակիցներին ամենադժարին վայրկեանին ու գնացին իրենց սեփական

խրճիթը կառուցանելու ու միայն իրենց ժողովրդի փրկութեան համար մտածելու: Այսպէս էին մեր քննադատութիւնները: Իսկ ո՞րն էր մեր դրական ծրագիրը: Ապրիլ 9(22)ին մենք ունէինք այդպիսին: Աւելին: Այդ ծրագիրը, ինչպէս յիշատակեց վերը, օժտւած էր այնպիսի յատկութիւններով, որ նոյն իսկ գրաւում էր միւս կուսակցութեանց որոշ անդամներին համակրութիւնը:

Այժմ Անդրկովկասի գործող ուժերից մի շատ կարեւոր հատած ի դէմս վրաց սոցիալ-դեմոկրատներին այն մասին, որ դէմ էր ապրիլ 9(22)ի ահտին, կառչել էր Վրաստանի անկախութեան ծրագրին, լքել էր ընդհանուր գործի ասպարէզը ու մերժում էր համագործակցութեան մեր բոլոր առաջարկները: Երկրորդ խոշոր ոյժը՝ Դաշնակցութեան ու առհասարակ հայ ժողովրդի դժգոհ տարրերը, որոնք մեր հաշիւների մէջ էին մտնում ապրիլ 9(22)ին, այսօր արդէն ջարդւած էին արտաքին թշնամու դէմ մղած անհաւասար կռոււմ եւ կորցրել էին իրենց ռազմական ու քաղաքական նշանակութիւնը: Այսպիսով ընկնում էր հաւելից նաեւ այս երկրորդ զինակիցը:

Վերջապէս, շատ աննպաստ էին դասաւորւած յեղափոխական ելոյթի համար նաեւ միւս պայմանները: Արտաքին թշնամին մայիս 26ին այնքան էր յառաջացել Անդրկովկասում ու այնպիսի ազդեցութիւն էր ձեռք բերել նոյն իսկ մեր ներքին գործերի նկատմամբ, որ ընդդէմ նրա ծրագրների այլեւս անհնարին էր որեւէ քայլ անել, մինչդեռ պարզ էր, որ թիւրքերը ոչ մի կերպով չպիտի համաձայնէին թոյլ տալ մի այնպիսի ելոյթ, որ իր իրականացման դէպքում ընդունելու էր ամենայն հաւանականութեամբ Բագրի մարտ ամսում տեղի ունեցած յեղաշրջման ընոյթը, այսինքն ուղղւած էր լինելու առաջին հերթին թաթարների դէմ: Նւազել էր մի ամուսայ ընթացքում նաեւ ռուս տարրի (գործ եւ պաշտօնէութիւն) տեսակարար կշիռը, որով է՛լ աւելի պակասել էին մեր կուսակցութեան համար վճռական դեր կատարելու հնարաւորութիւնները Անդրկովկասի ներքին կեանքում:

Այս բոլոր պատճառները դարձրել էին մեր ընդդիմադրութիւնը մայիս 26ի ահտին նւազ ներուժ: Քաղաքական ոչ մէկ պայքար չէ կարող անել միայն բացասական նշանախօսքերով: Իսկ առաջարկել դրական մի ելք, որ լինէր գործնական ու փրկէր Անդրկովկասը կործանումից, մենք չէինք կարող: առանց մեղանչելու մեր խղճի դէմ: Անդրկովկասը քայքայւում էր, եւ կանգնեցնել այդ քայքայւումը ներքին ուժերով այլեւս անհնարին էր: Ազգայնական տարրերը, որ ապերասան էր դարձել յեղափոխութեան պարտութեամբ ու ռուս պետականութեան ընկրկումով, ոչ միայն խորտակել էր երեք ազ-

դուժինները դեմոկրատական ուժերի միացեալ ճակատը, այլ եւ միմեանց դէմ էր հանել այդ ժողովուրդներին՝ փոխադարձ պայքարները մէջ վերջնականապէս սպառելու, ոչնչանալու պայմանով։ Նման պարագաներում միայն դրսի ոյժը կարող էր ապահովել երկրի արտաքին ու ներքին խաղաղութիւնը. պայմանով սակայն, որ նրա վերաբերմունքը դէպի անդրկովկասեան ժողովուրդները լինէր բարեացակամ։ Թիւրքը չէր այդ ոյժը եւ ոչ էլ գերմանացին, որ եկաւ իր հովանաւորութիւնը միայն վրացիները վրա տարածելու։ Եւ մեր ու մեզ հետ շատերի աչքերը հին ինտրիգայով յառած էին այդ օրերին կրկին դէպի Հիւսիս։ Բայց այնտեղ պետական կեանքը տակն ու վրա էր եղած։ Իշխանութեան շուրջը մղուող կռիւր դեռ չարունակւում էր։ Մենք հետեւում էինք այդ պայքարին մեծ յուզումով, որովհետեւ մեր փրկութիւնը գտնում էինք դեմոկրատական Ռուսաստանի վերականգնման մէջ։ Բայց այդ ժամը ուշանում էր, իսկ միւս կողմից Անդրկովկասում դէպքերը զարգանում էին անսխալ թաց արագութեամբ, ստիպողական պարտք դնելով քաղաքական կազմակերպութիւնների վրա՝ ճշտել իրենց գիրքը օրւայ կարեւորագոյն հարցերի նկատմամբ։

Վրացիների մայիս 26ին յայտարարած անկախութեան հետեւեց Հայոց Ազգ. Խորհուրդը։ Նոյն ամսի 31ին Թիֆլիսի թերթերում լոյս տեսաւ նրա հետեւեալ Յայտարարութիւնը. « Անդրկովկասեան քաղաքական ամբողջութեան լուծումով եւ Վրաստանի ու Ադրբեջանի անկախութեան հռչակումով ստեղծւած նոր դրութեան հանդէպ՝ Հայոց Ազգ. Խորհուրդը իրեն յայտարարում է հայկական դաւառների դերագոյն եւ միակ իշխանութիւնը։ Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մօտիկ օրերը կազմել հայոց ազգային կառավարութիւն՝ Ազգային Խորհուրդը ժամանակաւորապէս ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական դաւառների քաղաքական եւ վարչական ղեկը վարելու համբ»։

Վերը արգէն մատնանշեց, որ Հայոց Ազգ. Խորհրդի այս որոշումը որեւէ առարկութիւն չէր վերցնում ու աւելորդ էր դարձնում նոյն իսկ դիրք պարզելը նրա հանդէպ։ Սա, ի հարկէ, Հայաստանի անկախութեան*) հռչակում չէր։ Միւս կողմից բոլորի համար պարզ էր, որ կատարւած քայլի պատասխանատուութիւնը չէր ընկնում Հայոց Ազգային Խորհրդի վրա, քանի որ նրա այդ քայլը անխուսափելի էր դառնում վրացիների եւ ապա թաթարների դրանից առաջ ընդու-

*) Բնորոշ է, որ Յայտարարութեան հեղինակները ուշի ուշով խուսափել են թէ «Հայաստան» եւ թէ «անկախութիւն» բառերից։

նաժ ռոռոլոմներից յետոյ: Անդրկովկասի միացեալ իշխանութիւնը լուծեւել էր: Վրացիներն ու թաթարները հիմք էին դրել ինքնուրոյն քաղաքական կեանքի: Մնում էր մէջտեղում հայ ժողովուրդը: Կարող էին, արդեօք, այդ ժողովրդի քաղաքական կազմակերպութիւնները ձգել նրան իր բախտին: Ո՛չ: Եւ ահա նրանք, յանձինս Ազգ. Խորհրդի, «Ժամանակաւորապէս» իրենց ձեռքն են վերցնում հայկական դաւառների քաղաքական եւ վարչական ղեկը վարելու պարտականութիւնը: Ի՞նչ կարելի էր ասել դրա դէմ: Ոչինչ:

Բայց միւս կողմից սխալում են նաեւ մեր այն «պատմագիրները», որոնք Հայոց Ազգ. Խորհրդի «Յայտարարութիւնը» նմանեցնում են վրացիների հրապարակած անկախութեան ակտին: Հայերը 1918թ. մայիսի վերջին չէին կարող նոյնութեամբ կրկնել վրացիների արածը, քանի որ այդ պահին արդէն միատեսակ պայմաններում չէին գտնուում: Այն, ինչ որ փրկութիւն էր բերում վրացիներին, բոլորովին անպէտք ու նոյն իսկ վնասակար էր հայերի համար: Վրացիները, ինչպէս մատնանշեց վերը, դուրս գալով Անդրկովկասէն միութիւնից ու հիմնելով անկախ հանրապետութիւն գերմանացիների հովանաւորութեան տակ, մէկ անգամից ստեղծում էին իրենց համար անհամեմատ աւելի ձեռնտու պայմաններ, քան այն, որի մէջ նրանք գտնուում էին Անդրկովկասի միացեալ իշխանութեան վերջին օրերին: Նրանք, նախ եւ առաջ, ազատուում էին հայերից, որոնց ընկերակցութիւնը դարձել էր անշահաւէտ ու վնասակար վրացիների համար: Անջատելով հայերից, նրանք հնարաւորութիւն էին ձեռք բերում աւելի հեշտութեամբ լեզու գտնել տաճիկների հետ ու աւելի ձեռնտու պայմաններով հաշւեյարդարի ենթարկել պատերազմը: Միւս կողմից այդ անջատումն ու առանձնացումը ըստ երեւոյթին պայման էր գերմանացիների հովանաւորութիւնը ստանալու համար: Կային եւ ուրիշ առաւելութիւններ, որ ընձեռում էր վրացիներին մայիս 26ի ակտը: Այսպէս, օրինակ, ռուսական զօրքի ու վարչութիւնների թողած հսկայական հարստութիւնները, որոնք կուտակւած էին վրացական տերիտորիայում, տնտեսական հիմք էին դառնալու անկախ Վրաստանի եթէ ոչ բարգաւաճման, դոնէ անաղ-քատ դոյութեան համար: Եւ, վերջպէս, շնորհիւ այն հանգամանքի, որ վրաց ժողովրդի 90 տոկոսը ապրում էր հայրենի բնաշխարհի սահմաններում, նրա անկախութիւնը դառնում էր ազգային հարցի ամբողջական լուծման մի միջոց: Այս ամենը իրաւունք էր տալիս «Վրաստանի անկախութեան ակտի» հեղինակներին յայտարարելու, որ «սեփական պետութեան կազմակերպութիւնը» ոչ միայն «փրկելու

է ժողովուրդը թշնամական ուժերի ստրկացումից», այլ նաեւ «հաստատուն հիմքեր է դնելու նրա ազատ զարգացման համար»:

Միանգամայն տարբեր էին պայմանները հայերի համար: Հայաստանի անկախութիւնը ոչ միայն չէր ապահովում մեր ժողովրդի համար վերոյիշեալ առաւելութիւններից որեւէ մէկը, այլ է՛լ աւելի ծանրացնում էր նրա կացութիւնը: Անդրկովկասի քայքայումով մենք մնում էինք մեն մենակ թիւրքի դէմ, զրկւած մեր աւելի լաւ պայմաններում գտնուող հարեւանի ու դաշնակցի ղինական, ղիւանաղիտական ու նոյն իսկ բարոյական աջակցութիւնից: Մնում էինք մենակ այն ժամանակ, երբ նոյն այդ հարեւանի սխալ քաղաքականութեան ու սխալ քայլերի հետեւանքով (Անդրկովկասի անկախութեան հրոշակումը, նախ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի մերժումը եւ ապա Կարսի ու Ալեքսանդրապոլի յանձնումը եւ այլն) ստեղծւել էին մեզ համար արտաքին ճակատում շատ աւելի ծանր պայմաններ, քան այն, որ գոյութիւն ունէին նախքան Անդրկովկասի միացեալ հանրապետութեան կազմակերպութիւնը: Անկախութիւնը ոչ մի առաւելութիւն չէր տալիս մեզ նաեւ ներքին կեանքում: Անդրկովկասի մեր հողերի կէսը զբաւել էր թշնամին, իսկ այն, ինչ որ բարեհաճում էին մեզ ձգել մեր հարեւանները, անբաւարար էր տեղաւորելու մեր ժողովրդի նոյն իսկ մէկ տասերորդը: Չիօսելով աւելի հեռաւոր վայրերում գտնուող հայ բազմութիւնների մասին, միայն Վրաստանի ու Ադրբեջանի սահմաններում աւելի շատ հայ էր մնում, քան այն «հայկական գաւառներում», որի վրա Ադդ. Խորհուրդը տարածում էր իր «գերադոյն իշխանութիւնը»: Ինչ վերաբերում է Անդրկովկասի միութեան քայքայմամբ յիշեալ գաւառների համար ստեղծւած տնտեսական պայմաններին, ապա այս մարդի մէջ գրութիւնը ուղղակի կատաստրոֆային էր:

Այս ամենի խորը գիտակցութիւնն ունէին հայ քաղաքական կուսակցութիւնները եւ այդ էր պատճառը, որ նրանց ներկայացուցիչներից կաղմւած Ադդ. Խորհուրդը՝ կքած վայրկեանի ծանրութեան տակ, կորցրել էր իր քայլերի հաստատութիւնը եւ երբում էր անօդ այն ճանապարհի նախադրան, որով ղնացին վրացիներն ու ադրբեջանցիները:

Այսօր, 16 տարի անց, երբ անդրադառնում եմ Արամեանցի տանը մայիսի վերջերին կատարուող անցուղարձերին ու իշխող տրամադրութիւններին, երբ յիշում եմ, թէ ինչպէս Ադդ. Խորհուրդը օրերով միտք էր յղոնեցնում այնպիսի մի ձեւով խմբագրելու իր «Յայտարարութիւնը», որ նա Հայաստանի անկախութեան հռչակման տպաւորութիւնը չթողնէ եւ մինչեւ վերջին վայրկեանը, կառչած իր

այդ մտասեւեռումին՝ Բաթում մեկնող պատերազմներին հրահանգում էր փորձել հաշտութիւնը կնքել «հայ ժողովրդի անունից» եւ թիւրքերի առարկութեան դէպքում միայն՝ հանդէս դալ որպէս «անկախ Հայաստանի» ներկայացուցիչներ^{*)}, ինձ նոյն իսկ թւում է, որ այդ ժամանակ մենք մի քիչ չափազանցնում էինք: Ես հասկանում եմ, որ Ազգ. Խորհուրդը չէր կարող խանդավառւել իր կատարած քայլով, չէր կարող ոգեւորւել այն վիճակով, որ ստեղծւում էր դրա հետեւանքով «հայկական դաւառների» բնակչութեան համար, բայց թէ նա դործնական ինչ առաւելութիւններ էր ձեռք բերում, խուսափելով անկախութիւն յայտարարելուց, մնում է հարցական: Թւում է, որ մերժելով յայտարարել Հայաստանը անկախ եւ դրանով իսկ ցոյց տալով, որ այդ անհնարին է ստեղծւած կացութեան հետեւանքով, Ազգ. Խորհուրդը ցանկանում էր բողոքել հայ ժողովրդի անունից այն բախտի դէմ, որին այդ ժողովուրդը արժանացել էր գերազանցապէս ուրիշների (թշնամի եւ բարեկամ) պատճառով: Ազգ. Խորհուրդը չէր ուզում, որ դէթ մէկ վայրկեան աշխարհը կարծէ, թէ մայիսի վերջերին ստեղծւած կացութիւնը հայ ժողովուրդը կարող է համարել իր համար, որպէս ազգային ձգտումների թէկուզ ամենանւաղագոյն չափի կատարում ու դրանով որեւէ ձեւով բաւարարւել: Եւ երբ այն ժամանակւայ հայ թերթերը, որոնց թւում նաեւ Դաշնակցութեան Բիւրոյի օրգան «Հոփիզմ»ը, չակերտների մէջ էին դնում «Հայաստանի Հանրապետութիւն» բառը, կամ անյարգալից արտայայտութիւններ էին դործածում նրա մասին խօսելիս, այդ անում էին ոչ թէ «ազգային սրբութիւններ» ծաղրելու մոլուցքով տարւած, այլ միայն մէկ նպատակով՝ բողոքել ու զփոգհել մարդկանց ու պատմութեան դէմ, որոնք փորձում էին այդ «հանրապետութիւններ» ներկայացնել մեզ որպէս փոխարժէք մեր տւած զոհաբերութիւնների ու դրանով փակել մեր պահանջների հաշիւը:

«Ճշմարիտ է, ծանր է նոյն իսկ «հայկական հանրապետութիւն» կամ նման մի անուն տալ այն լեռնոտ, չոր ու ցամաք եւ կղզիացած երկրամասին, — գրում էր Հ. Յ. Դ. Բիւրոյի օրգան Հոփիզմը իր յունիս 6ի խմբագրականում, — որ մեր ժողովրդի մի մասնիկը դեռեւս հնարաւորութիւն ունի պահպանելու իր ազատութիւնն ու անկախութիւնը: Բայց եւ այնպէս պիտի հաշտեմք եւ այս մտքի հետ, ինչպէս ստիպ-

*) Պատերազմներ տրւեց քէ մէկ եւ քէ միւս տեսակի լիազօրագրութիւններ: Վերադարձին Ա. Խաթիսեանը պատմեց, որ քիւրդները հէնց սկզբից այնպիսի մի ձեւով դրին խնդիրը, որ ինքը խօսք անգամ չկարողացաւ անել հայ ժողովրդի անունից հաշտութիւն կնքելու մասին:

ւած եղանակ հաշտել մեր մեծ կորուստների եւ գոհաբերութիւնների հետ» (ընդգծումն իմն է Ա. Խ.) : Հայաստանի «հանրապետութիւնը» «Հորիզոն»ը համարում է ոչ թէ մի նւաճում մեր ժողովրդի համար, այլ «կորուստ ու զոհաբերութիւն» : Եւ Բաթումի դաշնագրի կնքման անմիջական ազդեցութեան տակ, Դաշնակցութեան պաշտօնաթերթը առաջարկում է հաշտել այդ «հանրապետութեան» գոյութեան հետ, ինչպէս «հաշտել ենք» մեր մեծ կորուստների հետ : Որպիսի՞ դառնութիւն ու ցասում կայ կուտակւած այս «հեղ» առաջարկի մէջ :

Այսպէս, ուրեմն, չտեսնելով որեւէ առաւելութիւն անկախութեան յայտարարման մէջ, Ազգային Խորհուրդը խուսափեց այդ վրձնական ու վերջնական բնոյթ կրող քայլից եւ հայ քաղաքական կեանքի կազմակերպման խնդրում բարւոք համարեց ունենալ ապագայի համար աւելի ազատ ձեռքեր : Նա հռչակեց եւ այն էլ առժամայէս միայն Հայաստանի դը Փակտօ գոյութիւնը, եւ այս որոշմանը հաւանութիւն տւին քաղիսիոնի մէջ մտնող բոլոր կուսակցութիւնները :

Երկրորդ քայլը, որ մնում էր կատարելու, կառավարութեան կազմութիւնն էր, որով Ազգ. Խորհուրդը զբաղւեց, սակայն, միայն պատերազմի հաշւեյարդարը կատարելուց յետոյ :

Ռազմաճակատի խնդիրը մէկն էր այն հազադիւտ հարցերից, որի շուրջը ոչ մէկ տարակարծութիւն չկար հայ կուսակցութիւնների մէջ : Այն պահին, երբ պէտք էր պաշտպանել ճակատը, նրանք բոլորն էլ, չափաւոր թէ ծայրայեղ, միատեսակ էին դնահատում դրա նշանակութիւնը : «Պաշտպանել, ամենակտիւ եւ թմենալճուական կերպով պաշտպանել — ահա միմենտի ամենահիմնական խնդիրը : Մենք չենք կարող առանց կուռի յանձնել ոչ Բաթումը, ոչ Կարսը» : Այսպէս էր գրում մեր կուսակցութեան պաշտօնաթերթ «Զնամեա Տրուդա»ն իր մարտ 30ի խմբագրականում : Մօտաւորապէս նոյն ձեւով էր արտայայտւում նաեւ հայ սոց. — դեմոկրատների օրգանը՝ «Պայքար» : Դաշնակցութեան մասին աւելորդ եմ համարում խօսել, քանի որ այդ կուսակցութիւնը իր ամբողջ ոյժն ու կորովը նւիրել էր ռազմաճակատին :

Ինչ վերաբերում է գործնականին, գոյութիւն ունէր Թիֆլիսում Հայ Զինուորական Միութիւն, որտեղ քաղիսիոն կազմով ու համերաշխ միջոցառման մէջ գործում էին դաշնակցական սպաների կողքին սոց. — յեղափոխականներն ու սոցիալ-դեմոկրատները : Աւելորդ եմ համարում յիշատակել, որ նոյն «քաղիսիոնը» գոյութիւն ունէր նաև առաջին գծի վրա կուտակների շարքերում :

Որեւէ աչքի ընկնող տարբերութիւն չկար հայ կուսակցութիւն-

ներ մէջ նաեւ հաշտութեան խնդրի նկատմամբ: Նրանք բոլորն էլ գիտակցում էին այս հարցի լրջութիւնը և նրան մօտենում էին, մէկզի դնելով կուսակցական հաշիւները: Ռազմաճակատի եւ հաշտութեան հարցերի քննութեան նւիրւած ամենապատասխանատու ժողովներից մէկում, որ տեղի ունեցաւ Ալեքսանդրապոլում ապրիլի սկզբներին, ընդունեց դաշնակցականների առաջարկը՝ չսահմանափակել ժողովականների կարծիքների ազատութիւնը Ֆրակցիաներում նախապէս ընդունւած սրոշումներով ու իրաւունք տալ ժողովի բոլոր մասնակցողներին հանդէս դալ իրենց անհատական տեսակէտների սլաշտպանութեամբ:

Եւ, վերջապէս, երբ սկսեց պարզւել պատերազմի ելքը՝ նաեւ այս հարցում առանձին տարակարծութիւններ չեղան Ազգ․ Խորհրդի մէջ մտնող կուսակցութիւնների մէջ: Յամենայն դէպս չստեղծեց այնպիսի մի դրութիւն, որ սոցիալիստական կուսակցութիւնները (սոց․—յեղափոխ․ եւ սոց․—դեմոկ․) ժամանակից առաջ յայտարարէին հայ ժողովրդի պարտւած լինելու մասին ու պահանջէին հաշտութիւն կնքել, իսկ Դաշնակցութիւնը պնդէր պատերազմի շարունակման վրա: Մայիս 30ին անդրադառնալով Երեւանի կոիւններին եւ արձանագրելով հայերի ունեցած յաջողութիւնը, «Հարիզուն»ը հետեւեալն էր գրում․ «Սակայն, որքան էլ ծանր լինի խոստովանել, որքան էլ դժուար լինի ասել մանաւանդ այս օրերին, մենք այնուամենայնիւ պարտք ենք զգում ասելու այն դառն ճշմարտութիւնը, թէ մենք յաղթւած ենք...»:

...«Յաղթւած ենք, որովհետեւ կապւած լինելով մեր հարեւան ժողովրդի հետ եւ չկամենալով խզել մեր կապը դրացի ժողովրդների դեմոկրատիայի հետ եւ պայթեցնել յեղափոխական դեմոկրատիայի Ֆրոնտի միութիւնը, համակերպել ու ղիջել ենք շատ բան եւ այդպիսով կորցրել ենք մեր ռազմական կարողութեան մեծ մասը: Յաղթւած ենք, որովհետեւ մնացել ենք մենակ, կազմալուծւած բանակով, որովհետեւ մեր բնակեր ժողովուրդը յոգնած է եւ ծարաւի է խաղաղ կեանքի»:

Ստեղծւած կացութեան այս գնահատութիւնը, որ տալիս էր Ազգ․ Խորհրդի ամենազօրեղ հատուածի պաշտօնաթերթը, մեր առաջ միայն մէկ ելք էր դնում՝ Բաթումի անճնատութիւնը: Եւ այդ անճնատութեան մենք դնացինք, միշտ այն գիտակցութիւնն ունենալով, որ պատմական տւեալ վայրկեանին ուրիշ որեւէ այլ լուծում չկար: Հայ ժողովրդի քաղաքական կեանքի նաեւ այս երկրորդ կարեւոր հարցի անսխառունակ ելքը կանխորոշւել էր այն քաղաքականութեամբ, որ որդեգրեցին Սէյմի մեծամասնութիւնը կազմող կուսակ-

ցութիւններ և մանաւանդ վրաց սոց. — դեմոկրատները ապրիլ 9(22)ի պատմական նիստին :

Միակ հարցը, որ ունէր զուտ ներքին խնդրի բնոյթ, որ ծագել էր այն ժամանակ, երբ Աղդ. Խորհուրդը արդէն դարձել էր հայ ժողովրդի բախտի միակ տնօրէնը եւ որի այս կամ այն ուղղութեամբ լուծման վրա նախկին դէպքերը վճռական որեւէ ազդեցութիւն չունէին, դա կառավարութեան հարցն էր: Եւ բնորոշ է, որ հէնց այս խնդրում ճեղքեց ստեղծած միացեալ ճակատը, առաջ եկան տարակարծութիւններ կուսակցութիւնների մէջ և ի վերջոյ հարցը լուծւեց ոչ այն ուղղութեամբ, ինչ որ համապատասխանում էր այդ ժամանակւոյ ծանր կացութեան: Ինչպէս յայտնի է, Հայաստանի անդրանիկ դաշինքը չեղաւ «աղդային միութեան» կառավարութիւն, ինչպէս որ էր Վրաստանինը: Նա կազմւեց ոչ թէ կուսակցութիւնների քուլիսինի հիման վրա, այլ պերսոնալ կարգով, եւ նրա մէջ մտան միայն դաշնակցականներն ու անկուսակցականները:

Փաստօրէն այդ ժամանակ Աղդ. Խորհուրդի առաջ դրւած էր երկու մարմինների կազմութեան հարցը՝ Խորհրդարանի եւ կառավարութեան: Հնարաւորութիւն չունենալով այն զարհուրելի պայմաններում ընտրութիւններ կատարել եւ, հետեւելով վրացիների օրինակին, որոշւեց Հայաստանի Խորհրդարանը կազմել կուսակցութիւնների ներկայացուցիչներից՝ կատարելով ավտոմատի բաշխումը փոխադարձ համաձայնութեամբ: Այս հարցը լուծւեց շատ արագութեամբ եւ առանց որեւէ վիճաբանութեան

Տարբեր եղաւ կառավարութիւն կազմելու խնդիրը: Յունիսի 9ին Աղդ. Խորհուրդը որոշում է կառավարութիւնը կազմել միջկուսակցական հոգի վրա և վարչապետ է ընտրում Յ. Քաջազնունուն*): Ձեռնարկելով բանակցութիւնների կուսակցութեանց ներկայացուցիչների հետ, Յ. Քաջազնունին առաջին իսկ քայլից հանդիպում է դժւարութիւնների: Եւ զարմանալին այն է, որ դժւարութիւն յարուցանողները լինում են ոչ այնքան էսէռներն ու էսդէկները, որքան Հայ ժողովրդի դաշնական կուսակցութիւնը: Հակառակ պարլամենտական կարգերից բխող պահանջներին, այս «ազատական» ու «սահմանադրական» կու-

*) «Հորիզոն»ը իր յունիսի 13ի քւի մէջ գրում է, որ Քաջազնունուն ընտրութիւնը տեղի է ունեցել Աղդ. Խորհրդում «բոլոր ձայներով ընդդէմ երկուսի (Հայ ժողովրդական կուսակցութեան անդամներ)»: Այդ նշանակում է, թէ քեր ձայն են տւել նաեւ ա. — յեղափ. ու ա. — դեմոկրատ., թէ նրանք բացակայ են եղել այդ նիստից, եւ, դժբախտաբար, չեն յիշում:

սակցութիւնը պահանջում էր, որ կառավարութիւն կազմելու իրաւունքը յանձնւի իր ներկայացուցչին, թէեւ ինքը չնչին փոքրամասնութիւն էր հայ կեանքում ու Ազգ. Խորհրդում: Իրենց պահանջներին ոյժ տալու համար, ժողովրդականները միտինդներ էին գումարում Թիֆլիսի չքեղ սրահներում եւ բանաձեւեր քննարկում յօգուտ իրենց թեկնածու Մ. Պապաջանեանի: Այդ ծանր օրերին Սոլուակի*) տնատէրերից ու Գոյովինսկի պողոտայի**) վաճառականներից բաղկացած այդ հաւաքոյթները, իրենց արհեստական ու անտեղի աղմուկով, թատերական շարժումներով ու անընդմիջող ծախահարութիւններով աւելի նպաստաւոր տպաւորութիւն չէին ձգում հայ սրտաբեկ ու սգաւոր բաղմութիւնների վրա, քան «Արշին Մալ Ալանների» ու «Մաշտի Իրատների» ամենօրեայ ներկայացումները:

Հրապարակային այս միտինդներից զատ ժողովրդականները հետապնդում էին իրենց «դատը» նաեւ վարադոյրի յետեւում սարքւող քաղաքական խաղերի միջոցով: Նրանք փորձում էին ստեղծել մի միջկուսակցական մարմին՝ բաղկացած հայ բոլոր հոսանքների (բացի Դաշնակցութիւնից) ներկայացուցիչներից, որ պէտք է իր նախապատրաստական ժողովներում ջանար մշակել միօրինակ գործելակերպ Ազգ. Խորհրդի նիստերում հանդէս գալու համար: Այս ժողովների ոգին էր Մ. Պապաջանեանը, իսկ եռանդուն մասնակցողները՝ նոյն ժողովրդականներն ու հայ սոց. — դեմոկրատները: Մասնաւորապէս այս վերջինների ազդեցութեան տակ մի երկու ժողովի մէջ մասնակցում են նաեւ մեր՝ սոց. — յեղափոխական ընկերներից ոմանք: Պատահաբար, Մ. Պապաջանեանի ինձ արած առաջարկից իմանալով այդ ժողովների մասին, եւ դէմ լինելով մեր մասնակցութեան, ես հարցը դրի պաշտօնական քննութեան մեր հայ ընկերների ընդհանուր ժողովում, — որտեղ, ի դէպ ասած, այդ շրջանում քննում ու վերջնական լուծում էին ստանում հայ իրականութեան հետ կապած բոլոր խնդիրները, — ուր եւ որոշեց չմասնակցել ժողովրդականների խաղերին, դէմ արտայայտւել նրանց յաւակնութիւններին դահլիճ կազմելու նկատմամբ***), չառարկել Յ. Քաջազնունու, որպէս ամենագորեղ կուսակցութեան անդամների՝ վարչապետութեան դէմ եւ կառավարութեան մէջ մեր կուսակցութեան մասնակցութեան հարցը յետաձգել Երեւանում լուծելու, այնտեղի ընկերների մասնակցութեամբ:

*) Հարուստների քաղը Թիֆլիսում: ԽՄԲ.

**) Ամենամեծ ու ամենավաճառաշահ փողոցը Թիֆլիսում: ԽՄԲ.

***) Այս որոշումների անմիջական արտայայտութիւն էր «Կաւ-

Այս որոշումները դարձան պարտաւորիչ Ազգ. Խորհրդի մեր ներկայացուցիչների համար, եւ դրանցով էլ նրանք առաջնորդւեցին կառավարութիւն կազմելու խնդրի քննութեան ժամանակ: Հետագայում նոյն այդ խնդրի վերաբերեալ մենք իւրացրինք նաեւ մի նոր կէտ: Մեկնելով այն իրողութիւնից, որ Հայաստանի նորաստեղծ Հանրապետութիւնը, ամփոփելու է իր մէջ հազիւ կէսը անգամ Ռուսաստանի հայութեան, որով Ազգ. Խորհուրդը Երեւան տեղափոխւելու դէպքում, միւս կէսը մնալու է առանց քաղաքական ղեկավարութեան, Ստ. Մամիկոնեանը (Ազգ. Խորհրդի անկուսակցական անդամ) այն կարծիքն էր պաշտպանում, որ Ազգային Խորհուրդը չպէտք է լքէ համազգային մարմնի իր հանդամանքը եւ դռնանայ միայն «Արարատեան Հայաստանով»: Այստեղից բխում էր նաեւ այն կոնկրետ առաջարկը, — որին միացանք մենք՝ սոց. — ղեկափոխականներս, — թէ Երեւան գնալուց ու այնտեղ Պետական Խորհուրդ ու կառավարութիւն

կազմուի Սյուփո» ռուսերէն քերթում յունիս 12ի իմ գրած խմբագրականը, որտեղ, այն տեսակէտն է անցկացւած, որ ժողովրդականների յաւակնութիւնները անհիմն են նախ այն պատճառով, որ այդ կուսակցութիւնը «իր արմատներն ու կորիզները Անդրկովկասի կենտրոնական քաղաքների բուրժուական խաւերի մէջ ունենալով, չկարողացաւ ղեկափոխութեան ժամանակաշրջանում հաստատուն կապեր ամրապնդել հայ դաւառի և գիւղացիութեան լայն զանգւածների հետ»: Միւս կողմից նրանց այն առարկութիւնը, թէ Դաշնակցութեան քաղաքականութիւնը սնանկացել է, ուստի իշխանութիւնը պիտի իրենց յանձնի, որպէս աւելի խելացի գործելակերպ ունեցող կուսակցութիւն, պատմականորէն միշտ չէ, քանի որ «եթէ անձնական բնոյթ կրող մանր տարածայնութիւնները մի կողմ թողնենք, ապա սկզբունքային բոլոր հարցերում, ինչպէս «Մշակ»ը, այնպէս էլ ժողովրդական կուսակցութիւնը չեն ունեցել յստակօրէն արտայայտւած տարբերութիւն Դաշնակցութեան վարած քաղաքականութիւնից: Բոլոր կարեւորագոյն վարկեաններում ու բոլոր կարեւորագոյն հարցերում նրանք գնացել են Դաշնակցութեան հետ կամ նրա հետքերով: Պատերազմի և հաշտութեան, կամաւորական շարժման, Տաճկահայաստանի ինքնավարութեան, Անդրկովկասի վարչական սահմանների բաժանման, Տրապիզոնի բանակցութիւնների, Անդրկովկասի անկախութեան եւ նոյն իսկ տաճկական վերջին վերջնագրի բնութեամբ հարցերը Դաշնակցութեան եւ ժողովրդ. կուսակցութեան կողմից միատեսակ լուծում են ստացել, առանց որեւէ տարակարծութիւնների»:

... «Այս նկատումներով, անհիմն են ժողովրդ. կուսակցութեան յաւակնութիւնները հայ ժողովրդի ու կառավարութեան ապագայ քաղաքականութեան միակ ղեկավարի դերը ունենալու նկատմամբ»:

կազմելուց յետոյ, Աղգ. Խորհուրդը պիտի վերադառնայ Թիֆլիս եւ շարունակէ իր գոյութիւնը, որպէս համայն Ռուսաստանի հայութեան ազգային իշխանութիւն: Այս առաջարկը ընդունելութիւն չգտաւ Աղգ. Խորհրդի միւս անդամների կողմից: Մերժեցաւ նաեւ մեր միւս պահանջը՝ թոյլ տալ, որ կառավարութեան մէջ մտնելու մասին մեզ արեւած առաջարկին պատասխանենք Երեւանում: Այս երկու տեսակէտներն էլ բխում էին մեր սկզբունքային ըմբռնողութիւններից եւ բնաւ երբեք արդիւնք չէին որեւէ «անձնական նկատառումների»: Եթէ ճիշտ է, որ Աղգ. Խորհրդի անդամներից ոմանց մէջ տիրող էր Թիֆլիսից չմեկնելու ցանկութիւնը, այդ մեր ընկերներին, յամենայն դէպս, չէր վերաբերում: Խնդիրն այն է, որ փոխարքայի պալատից Արամեանցի տունը վերադառնալու հետեւանքով մեզ՝ հայ էսէռներին համար ստեղծւել էր մի բացառիկ կացութիւն, որպիսին գոյութիւն չունէր միւս կուսակցութիւնների համար: Մենք, շարունակելով պահպանել մեր կապը մայր կուսակցութեան հետ, փաստօրէն դարձել էինք անկախ մի կազմակերպութիւն հայկական իրականութեան վերաբերող գործերի նկատմամբ: Բայց այս այսպէս լինելով հանդերձ, հայ էսէռներս դեռ չէինք կարողացել ստեղծել այն օրինական մարմինները, որոնք անհրաժեշտ են քաղաքական իւրաքանչիւր մի կուսակցութեան գործունէութիւնը ղեկավարելու համար: Դաշնակցականներն ու ժողովրդականները ի վիճակի էին վերոյիշեալ բոլոր խնդիրների համար վերջնական որոշումներ ընդունելու Թիֆլիսում, քանի որ այնտեղ էին գտնւում նրանց կենտրոնական մարմինները: Անգամ հայ սոցիալ-դեմոկրատները, որոնք թէեւ դեռ չէին խզել իրենց կապը վրացական կազմակերպութեան հետ եւ այդ պատճառով էլ չունէին առանձին ղեկավար մարմին, այնուամենայնիւ հնարաւորութիւն ունէին վերջնական լուծում տալու իրենց առաջ դրած հարցերին, քանի որ նրանք, համարեաւ ամբողջ կազմով (պարագլուխներ եւ շարքայիներ), կենտրոնացած էին Թիֆլիսում: Այլ էր, կրկնում եմ, մեր դրութիւնը: 1918 թւի ամառը Թիֆլիսում գտնւում էր հայ էսէռների մի խումբ, որ կտրւած էր թէ Բագրի եւ թէ մանաւանդ Երեւանի կուսակցական կազմակերպութիւններից: Այդ խմբի անդամները, իրենց տեսակարար կշիռով, ոչնչով բարձր չէին Երեւանի մեր ընկերներից եւ այդ պատճառով էլ իրենց իրաւունք չէին համարում՝ Թիֆլիս նստած՝ կարգադրել այնպիսի խնդիրներ, որոնք վերաբերում էին Հայաստանին: Նոյն այս պատճառով մենք որոշել էին Թիֆլիսից Երեւան ուղարկել Հայաստանի Խորհրդի համար միայն երկու անդամներ, մնացած չորս տեղը վերապահելով Երեւանի մեր ընկերներին: Առանց այս վերջինների կար-

ծիքն իմանալու, մենք, բնական է, չէինք կարող լուծել այնպիսի մի ծանրակշիռ հարց, ինչպիսին էր կառավարութեան մէջ մասնակցելու հարցը:

Դրական պատասխանն չտւին Յ. Քաջազնունու առաջարկին նաեւ հայ սոցիալ-դեմոկրատները: Ծիշո է նրանք յայտնեցին, որ պատրաստ են մտնելու քրալիսիոն կառավարութեան մէջ, սակայն, դրին այնպիսի չափազանցած պահանջներ, որ փաստօրէն նրանց պատասխանը դիտւեց որպէս մերժում:

Այսպիսով, հակառակ վրացիներին եւ ազրբէջանցիներին տւած օրինակներին, հայ կուսակցութիւնները չկարողացան համաձայնութեան գալ միմեանց հետ քրալիսիոն կառավարութիւն կազմելու մասին: Ո՞վ էր մեղաւորը: Այս դէպքը պատմութեան է անցել այնպէս, որ Դաշնակցութիւնը ցանկացել է կազմել քրալիսիոն կառավարութիւն, սակայն, միւս կուսակցութիւնները չեն համաձայնել դրան: Զօխտելով այդ կուսակցութիւնների պատասխանատուութիւնը քրալիսիոնի ձախողման խնդրում, ես կարծում եմ, որ յանցանքի մի մասն էլ ընկնում է Դաշնակցութեան վրա: Այդ կուսակցութիւնը շատ իւրայատուկ ըմբռնում ունէր քրալիսիոնի մասին, որի մէկ փայլուն օրինակն է «Թիֆլիսում ապրող դաշնակցական ընկերների» յուշիւ 12ի ընդհանուր ժողովի ընդունած բանաձեւը: Սկսելով այն մատնանշումից, որ «Դաշնակցութիւնը ստացել է քէշներին մեծամասնութիւնը թէ դիւղացիական համագումարում, թէ քաղաքային դումաներում եւ թէ Սահմանադիր ժողովում», այդ բանաձեւը շարունակութեան մէջ յայտարարում է, որ «միւս կողմից Դաշնակցութեան վարած քաղաքականութիւնն է ՄԻԱՅՆ, որ կարող է համապատասխանել հայութեան շահերին, եւ երրորդ կողմից, ի նկոյն առնելով ներկայ ամենապատասխանատու բոլէշն, երբ կազմակերպւում է անկախ Հայաստանի պետականութիւնը, Հ. Յ. Դաշնակցութիւնն է ՄԻԱԿ իրաւուն կուսակցութիւնը, որ պիտի ղեկավարի հայ կեանքը եւ առաջիկայում (ընդգծումները իմն են՝ Ա. Խ.), մինչեւ հայկական Սահմանադիր ժողովի ընտրութիւնները, երբ հայ ժողովուրդը կը դադարէ քէշով լիազօրելու այս կամ այն կուսակցութեան ղեկավար հանդիսանալ հետագայի նկատմամբ»:

Այսպիսի մտայնութիւն ունեցող կուսակցութիւնը, ի հարկէ, չէր կարող որեւէ ձեւով քրալիսիոն դործունէութեան հետ հաշտւել, եւ մենք տեսնում ենք, որ, իսկապէս, միջկուսակցական կառավարութիւն կազմելու բոլոր ճիգերը անցան ապարդիւն, եւ Ազգ. Խորհուրդը իր յունիս 30ի նիստում, վերաքննելով կառավարութիւն կազմելու հարցը, ձայների մեծամասնութեամբ (էսէռները եւ հոգեկները

ձեռնպահ մնացին) որոշեց յանձնել Յ. Քաջազնունուն կազմել կառավարութիւն պէրսոնալ սկզբունքով, ինչ որ եւ կատարեց այնուհետեւ:

Ես պէտք է այստեղ աւելացնեմ, որ որքան էլ անհաճոյ թւայ քոսալիսիոնի ձախողումը կառավարութիւն կազմելու գործում, չպէտք է, սակայն, չափազանցել դրա բացասական նշանակութիւնը: Խնդիրն այն է, որ Հանրապետութեան սկզբնական շրջանում երկիրը փաստօրէն կառավարեց Հայաստանի Խորհրդի միջոցով, որ իւրացրեց ոչ միայն օրէնսդրական, այլ նաեւ վարչական ու նոյն իսկ դատաստանական (ներման իրաւունք) ֆունկցիաներ (իրաւասութիւններ): Իսկ այդ Խորհրդի մէջ, ինչպէս ասեց վերը, ներկայացւած էին հայ բոլոր կուսակցութիւնները*):

Յուլիս 16ին Ազգ. Խորհրդի ու կառավարութեան անդամները պիտի մեկնէին Երեւան**): Այդ առիթով կուսակցութիւնները վերջնականապէս ճշտեցին, թէ ովքեր են լինելու Երեւան փոխադրուող իրենց ներկայացուցիչները: Հակառակ նախնական որոշման, վերջին պահին պարզեց, որ մեր կուսակցութեան կողմից Երեւան պիտի գնամ միայն ես: Աւելորդ է ասել, որ իմ ընտրութիւնը կատարեց հայ ընկերների ժողովը: Բայց համաձայն Ազգ. Խորհրդում ընդունւած որոշման, կուսակցական ներկայացուցիչների լիազօրադրերը պիտի տրւէին նրանց կենտրոնական մարմինների կողմից: Յուլիս 15ին ես իմ լիազօրադիրս ներկայացրի մեր Շրջանային Կոմիտէի նախագահ Բերեօղովին ի ստորագրութիւն:

«Ընկեր Ա. Խոնդկարեանը նշանակւում է Հայաստանի Պետական Խորհրդի***) անդամ», — կարդաց նա և ժպտախառն զարմանքով նայեց ինձ: Պետական Խորհուրդ էր կոչւում ցարական Ռուսաստանում ամենայնատաքիմական բարձրագոյն հաստատութիւններից մէկը, որը պայթեցնելու փորձ է արել մեր կուսակցութիւնը իր ժամանակին: Եւ ահա այսօր այդ նոյն կուսակցութեան անդամներից մէկը լիազօրւում է միւսին դառնալ «Պետական Խորհրդի անդամ»: Թէեւ ներկայ դէպքում հարցը վերաբերում էր Հայաստանին, բայց հին յեղափոխականը դժարութեամբ էր թօթափում իրենից այն տպաւորութիւնը, որ ժառանգութիւն էր մնացել անցեալ շրջանից:

Փարիզ

*) Սկզբնական շրջանում կար նոյն իսկ մէկ բոլշեւիկ անդամ:

**) Փաստօրէն մեկնեցին յուլիս 17ին:

***) Սկզբում որոշւած էր այդպէս կոչել Հայաստանի օրէնսդրական մարմինը, բայց յետոյ նա անւանեց Հայաստանի Խորհուրդ: